Շուշանիկ Կուրղինյան

Բանվորուհու երգը

Բաճկոնդ կապույտ,
Յուղոտ է՝ ի՞նչ փույթ .
Էլ լուծ չես կրի՝
Դու տերն ես երկրի . . .

Շինում ես, շտկում . . .
Քո ազնիվ մտքում,
Հոգսը նմանի
Տրտունջ չի հանի:

Հինն ես խարխլել,
Ոչինչ չես խլել .
Անհոգ թռչնի պես
Կուշտ օրդ է հանդես:

Դու հինն ես քանդել
Ու կապված անթել,
Հոգուս, սրտիս հետ՝
Կապրես, իմ ասպետ:

Ու արթուն մտքով
Ինձ էլ քո հետքով
Կանչում ես հառաջ,

Դատս ձեռքդ առած:

Բաճկոնդ կապույտ
Մրոտ է՝ ի՞նչ փույթ .
Ես լուծ չեմ կրի՝
Դու ես տերն երկրի . . .

1922 թ. 20 հունվարի